

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2015 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31- ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է <<Արցախբանկ>> ՓԲԸ 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակը, գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացման, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:


Ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողական կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության և համեմատականության համար,
- Բանկի գործունեության անընդհատության գնահատման համար,
- Հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար են Բանկի գործառնությունները արտացոլելու և ողջամիտ ճշգրտությամբ Բանկի ֆինանսական վիճակը բացահայտելու համար,
- ՀՀ օրենսդրությանը և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման վարման համար,
- Բանկի ներքին հսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և այլ անճշտությունների բացահայտման ու կանխման համար:

Արթուր Մխիթարյան

Գործադիր տնօրեն-Վարչության նախագահ

29 ապրիլի 2016թ.



Ռուզան Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ